



ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՎԱՔ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Նորին Սրբություն Ս. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի բարեհաճ կարգադրությամբ ա/թ. հոկտեմբերի 26—27 օրերին Մայր Աթոռում գումարվեց միաբանական հավաք, որին մասնակցեցին Մայր Աթոռի և ներքին թեմերի հոգևորականները: Սույն հավաքին ներկա էին նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը և Ռումինիայի հայոց առաջնորդական փոխանորդ տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանը:

Հոգևորականների ժամանումից հետո Մայր Աթոռ, չորեքշաբթի օրը, երեկոյան, Մայր տաճարում տեղի է ունենում երեկոյան ժամերգություն: Եպիսկոպոսների, վարդապետների և քահանայից դասից կազմված թափորը, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, առաջնորդվում է Մայր տաճար:

«Որ բնակեալ» սաղմոսից առաջ քարոզում է Մայր Աթոռի միաբան տ. Անանիա վրդ. Արաքաջյանը:

««Զի բարի կամ զի վայելուչ, զի բնակեն եղբարք ի միասին... անդ պատրաստեաց Տէր զօրհնութիւն, և զկեանքս յափտեմից» (Սաղմ. ԾԼԲ) բնաբանով:

«Որքա՛ն բարի կամ որքա՛ն վայելուչ է, երբ եղբայրները միմյանց հետ միասին են ապրում... այնտեղ է, որ Տէրը հաստատեց օրհնությունը և հավիտենական կյանքը»:

Մարդու կյանքում գոյություն ունեն օրեր, որոնք երբեք մոռացության չեն մատնվում... Օրեր կան, որ իմաստավորում են նրա ողջ կյանքը: Օրեր կան, վերջապես, որ նրա սրտում, նրա էության մեջ հավիտյանս հա-

վիտենից մնում են որպես քաղցր հուշ:

Այսօր այդպիսի օր է:

Աստվածային նախախնամությամբ և Նորին Սրբության հայրական ցանկությամբ մենք՝ հարազատ զավակներս ս. Էջմիածնի, հավաքվել ենք մեկտեղ: Հարազատ զավակներս ս. Էջմիածնի, Վեհափառ Հայրապետի... Ուրեմն և եղբայրներ ենք մենք, եղբայրներ՝ ծնված նույն հարկի տակ, սընված նույն կաթով և գուրգուրված նույն գորովագութ ձեռքով: Եղբայրներ ենք:

Աշխարհում ի՞նչը դրանից ավելի վեհ ու վսեմ կարող է լինել, քաղցր ու սուրբ:

«Ընդ աստեղօք ի՞նչ կա սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն»:

Մեր եղբայրությունը... Ինչի՞ հետ համեմատեմ այն իմ տկար մտքով: Ինչպե՞ս ներկայացնեմ, որ չնվաստացնեմ այն իմ անուրբ սրտով...: Թող խոսի, ուրեմն, ինքը՝ սաղմոսերգուն: Մեր եղբայրությունը նման է՝ Ահարոնի գլխի և զգեստների վրա թափվող օծման այն ազնիվ յուղին: Նման է Սիոն լեռան վրա իջած Հերմոնի ցողին, ու նրանց նման սուրբ է և անաբատ: Սիրո, բարեկամության և ներդաշնակ կյանքի մի իսկական ցույց է մեր եղբայրությունը:

Ծիշտ է, տարբեր ենք մենք: Տարբեր են մեր մտորումները կյանքում, մեր խառնըվածքը, մեր ընդունակությունները, մեր ուժերը: Սակայն մեկ ենք մենք, մեկ՝ մի՞նչ ի մահ կապված ս. Էջմիածնին անտեսանելի լուսե մի շղթայով... Ապրում, աղոթում, գործում և մեռնում ենք նրա ծաղկման, փառքի ու հարատևման համար...

Մեկ ենք՝ անձնագրողությամբ... հանուն մեր սուրբ ժողովրդի, մեր սուրբ եկեղեցու՝ ամեն ինչ զոհելու բոցավառ պատրաստակամությամբ:

Մեկ ենք՝ մեր մեծ Հայրապետի անձի և գործունեության անկասկածաբար լցված մեր անհուն նվիրումով և անկասկածելի հավատարմությամբ:

Եվ մանավանդ... մեկ ենք՝ Քրիստոսով:

Իմ սիրելի՝ եղբայրներ, ավագ և կրտսեր, ողջուն եմ ասում Ձեզ, ողջուն եմ ասում՝ բարևի համար: Ողջուն եմ ասում՝ ուրախության չափը հայտնելու համար: Ողջուն եմ ասում նաև բոլոր նրանց, ովքեր այսօր բացակա են: Ու շատ կուզենայի, որ այս եղբայրական ողջունի ոգին այս պահից սկսած թագավորներ մեր մեջ: Թող այս մեկ հատիկ բառով՝ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու խոնարհ վարդապետի արտասանած բարևով, մեծ բանաստեղծի խոսքերով ասած, «անկարելին դառնա կարելի»:

Աշխարհում համայն,

ամենքիս համար,

Դառնա կարելի վաղն ու հենց հիմա...»:

Ձերդ Սրբություն, սիրելի Վեհափառ,

Անկասկած մեծ է այսօր Ձեր հրճվանքը:

Դա, ավելի ճիշտ՝ հրճվանք է՝ խառնված ծնողական անխամբելի մխիթարությամբ: Այսօր, այս պահին, մեծ Մաշտոցի մման «առ ոտս» ունենալ մեր մեծ եկեղեցու զարկերակի տարբեր հեռուներում ծառայող հավատարիմ զավակներին, որոնք Կորյունի, Մովսեսի, Եզնիկի մման եկել են խոնարհաբար ունկնդրելու Հայոց Հայրապետի հորդորներն ու խորհուրդները:

Այս սուրբ պահին հավատում ենք, որ մեր մեջ է Աստված, այս պահին մեզ վրա է Նրա օրհնությունը և մեզ կյանք պարգևող Նրա աներևույթ Աջը:

Հանուն Նրա օրհնեցեք մեզ, Վեհափառ Տեր: Ձեր սուրբ աջադրությամբ պարգևեցեք մեզ ատոջ միտք, անհողորդ կամք և ծառայության անասան ոգի՝ է՛լ ավելի նվիրվածությամբ, անմնացորդ ուժով և հավատարմությամբ ծառայելու մեր պանծալի եկեղեցուն և Հայոց շինարար կաթողիկոսի սուրբ գործին:

Սիրելի եղբայրներ ի Քրիստոս, այժմ, այս խորհրդավոր պահին, երբ մենք՝ Մայր Աթոռի, Հայաստանյայց եկեղեցու ներքին թեմերի երիտասարդ հոգևորականներս, այստեղ ենք, ի՞նչ կարող ենք մատուցել մեր սիրելի Հայրապետին՝ որպես մեր երախտագիտության նշան, որպես ընծա: Իմ կարծիքով ոչ մի բան աշխարհում առավել չէ սիրուց և որդիական հավատարմությունից:

Ընդունեցեք, Վեհափառ Տեր, մեր այս երկու համեստ ընծաները և Ձեր ազնիվ սրտում պահեցեք դրանք որպես բարի պարգևներ երկա՛ր, երկա՛ր տարիներ:

«Տեր Աստուած մեր, պահեա զառաջնորդը և զեղբայրություն մեր ամբողջ և անխորո՛վ ի կամս ողորմության Քո այժմ և միշտ և յաիտեանս յաիտենից. ամեն»:

Հավարտ ժամերգության, երեկոյան ժամը 18-ին, Վեհափառի դահլիճում տեղի է ունենում միաբանական հավաքի առաջին նիստը: Վեհափառ Հայրապետի աղոթքից հետո Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը կատարում է նիստի հանդիսավոր բացումը: Սրբազան հայրը ներկաներին ծանոթացնում է հավաքի օրակարգի հարցերի հետ, որից հետո խոսքը տրվում է Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանին՝ ծանոթացնելու օրակարգի առաջին հարցին՝ «Ամենայն Հայոց կաթողիկոսի և Քննորդների արքեպիսկոպոսի կողմից ա/թ. հոկտեմբերի 2-ին ստորագրված համատեղ հայտարարությունը»:

Տ. Արսեն եպս. Բերբերյանն ունկնդիրներին կարդում է համատեղ հայտարարությունը, որից հետո տեղի է ունենում մտքերի փոխանակություն: Խոսք առնողները շեշտում են վերջին տարիներին, մանավանդ Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի զահակալության առաջին իսկ օրից (1955 թ.), հայ եկեղեցու՝ բոլոր եկեղեցիների հետ բարեկամական հարաբերությունները զարգացնելու օգտակար աշխատանքը, որի վառ ապացույցն է այնպիսի մի եկեղեցու պետի այցելությունը Մայր Աթոռ ս. Էջմիածին, ինչպիսին է անգլիկան մեծ եկեղեցին:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը, բաժարաբերով ներկաների հետաքրքրությունը, նրանց հանգամանորեն ծանոթացնում է անգլիկան եկեղեցու ներքին կառուցվածքին, պետության հետ ունեցած նրա հարաբերություններին, ինչպես նաև վերջին տարիներին նրա՝ Էկումենիկ ասպարեզում ունեցած գործունեությանը:

Ա. նիստի ավարտից հետո միաբանական տեղանատանը տեղի է ունենում հանդիսավոր ընթրիք:

Երեկոյան ժամը 20.30-ին սկսվում է միաբանական հավաքի Բ. նիստը, որի օրակարգում որված էր «Ինչպիսին պետք է ինչի արդի հոգևորականը» հարցը: Այս առթիվ Իր հայրական խոսքն է ասում Վեհափառ Հայրապետը՝ «Արծաթսիրտություն մայր ամենայն չաքնաց» բնաբանով:

Խոսելով տիպար հայ հոգևորականի մասին, Նորին Սրբությունը նշում է այն աճող հետաքրքրությունը, որ հայ ժողովուրդը, լինի հայրենիքում թե արտասահմանում, ցուցաբերում է հայ եկեղեցու և նրա սպասավորների նկատմամբ:

Վեհափառ Հայրապետը ի մասնավորի կանգ է առնում Հայաստանյայց եկեղեցու սպասավորների վարքի և անշահախնդիր ծառայասիրության հարցերի վրա՝ շեշտելով մեր սուրբ եկեղեցուն ազնվորեն, ծուծկալորեն և նվիրումով ծառայելու անհրաժեշտությունը:

Վեհափառ Հայրապետի հայրական խրատներից հետո ներկա բոլոր հոգևորականները իրենց շնորհակալությունն ու երախտագիտությունն են հայտնում Նորին Սրբության օգտակար խրատների համար:

Հաջորդ օրը, հոկտեմբերի՝ 27-ին, Բյուրականի «Հայկաշեն» հայրապետական ամառանոցում տեղի է ունենում միաբանական հավաքի Գ նիստը, որը նվիրված էր Սովետական Միության մեջ հրապարակված եկեղեցական համայնքների կազմավորման և գործունեության վերաբերյալ կանոնադրությանը:

Վեհափառ Հայրապետը խոսելով այդ կանոնադրության բովանդակության մասին, բնութագրում է այն որպես ողջունելի մի նոր երևույթ եկեղեցու և պետության միջև հարաբերությունների ճանապարհին, որով եկեղեցական համայնքները ճանաչում են

ստանում: «Այս՝ առաջընթաց մեկ քայլ է և պետության կողմից լայնախոհ մի վերաբերմունք, որ մեզ՝ հոգևորականներին ալելի ու ալելի է պարտավորեցնում», ասում է Վեհափառ Հայրապետը:

Այս, ինչպես նախորդ՝ Բ նիստի ընթացքում, այստեղ նույնպես Նորին Սրբությունն ընդարձակ կերպով խոսում է հայ հոգևորականի անշահախնդիր ծառայասիրության մասին:

Վերջացնելով իր խրատական խոսքը, Նորին Սրբությունը մաղթում է բոլոր ներկաներին կարողություն՝ տեսնելու ճշմարիտը, գեղեցիկն ու բարին, որոնք շրջապատում են մեզ, որով և իմաստավորվում է մեր հոգևոր գործունեությունը: Այդ դեպքում միայն հոգևորականը կկարողանա արդարացնել իր ժողովրդի կողմից նրա վրա դրված մեծ վստահությունը:

Հայրապետական օրհնության խոսքից հետո ամառանոցի սեղանատանը տրվում է հրաժեշտի ճաշկերույթ:

Նույն օրը, հրաժեշտ առնելով Նորին Սրբությունից, իրենց պաշտոնատեղիներն են մեկնում հավաքի բոլոր մասնակիցները՝ իրենց սրտերում տանելով Հայոց Հայրապետի պատգամի անշեշ հուրը:

«Ես արհամարհեալ եղի և ոչ գիտացի... կալար զաջոյ ձեռանէ իմմէ, ի խորհուրդս քո ստաջնորդեցեր ինձ» (Սաղմ. ՀԲ):

ԱՆԱՆԻԱ ՎՐԴ. ԱՐԱՍԱԶՅԱՆ

